

ՍԻԱՍԱՎԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2016

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո շմոռանար պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճևաթղթում: **Պատասխանների ճևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:**

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1

Ի՞նչ բաժիններ են տարրերում ձևերի ողնաշարում.

- 1) պարանոցային, կրծքագոտկային, սրբանային և պոչային
- 2) կրծքագոտկային և պոչային
- 3) իրանային և պոչային
- 4) պարանոցային, իրանային և պոչային

2

Ո՞ր օրգաններն են մասնակցում սեռահասուն անպոչ երկկենցաղների շնչառությանը.

- 1) խոիկները և թոքերը
- 2) տրախեաները և մաշկը
- 3) խոիկները և տրախեաները
- 4) թոքերը և մաշկը

3

Որտե՞ղից է սկսվում թռչունների արյան շրջանառության փոքր շրջանը.

- 1) ձախ փորոքից
- 2) աջ նախասրտից
- 3) ձախ նախասրտից
- 4) աջ փորոքից

4

Ո՞ր սնկերին է պատկանում մուկոքը.

- 1) գլխարկավոր սնկեր
- 2) թորբոսասնկեր
- 3) խմորասնկեր
- 4) մակարույծ սնկեր

5

Մողեսների ողնաշարի ո՞ր ողերն են կրում կողեր.

- 1) կրծքային և գոտկային բաժինների ողերը
- 2) պարանոցային և կրծքային բաժինների ողերը
- 3) կրծքային, գոտկային և սրբանային բաժինների ողերը
- 4) միայն կրծքային բաժնի ողերը

6

Ի՞նչ հաջորդական բաժիններից է կազմված միջատների մարտղական համակարգը.

- 1) բերան, ըմպան, կերակրափող, առջևի և միջին աղիներ, հետնաղի
- 2) բերան, կլան, կերակրափող, կտնառք, ստանքս, առջևի և միջին աղիներ, հետնաղի
- 3) բերան, կլան, երկու բաժնից կազմված ստանքս, առջևի աղի, հետնաղի
- 4) բերան, կերակրափող, առջևի և միջին աղիներ, հետնաղի

7

Ինչի՞ առկայությունն է քնորոշ և օղակավոր որդերին, և տափակ որդերին.

- 1) ստամոքսի
- 2) հետանցքի
- 3) աղիքի
- 4) կերակրավողի

8

Պոլիա հիդրայի մարմնի էկտոդերմում ո՞ր բջիջներն են առավել մեծ քանակությամբ դասավորված շղափուկների վրա.

- 1) միջակա
- 2) նյարդային
- 3) մաշկամկանային
- 4) խայթող

9

Մարդու գլխուղեղի ո՞ր բաժինն է ապահովում մարմնի հաստատուն ջերմաստիճանը.

- 1) միջին ուղեղը
- 2) միջանկյալ ուղեղը
- 3) երկարավուն ուղեղը
- 4) կամուրջը

10

Մարդու ո՞ր ոսկորներն են միացած սերտաճման միջոցով.

- 1) ողնաշարի սրբաճային բաժնի ողերը
- 2) ողնաշարի գոտիկային բաժնի ողերը
- 3) վերին և ստորին ծնոտները
- 4) զանգի քունքային և ծոծրակային ոսկորերը

11

Մարդու օրգանիզմում որտե՞ղ են գտնվում պայմանական ռեֆլեքսների կենտրոնները.

- 1) ողնուղեղի գորշ նյութի հետևի եղջյուրներում
- 2) գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևում
- 3) ողնուղեղային հանգույցներում
- 4) վեգետատիվ նյարդային համակարգի հանգույցներում

12

Որտե՞ղ է վերլուծվում մարդու կիսարողոր խողովակների մազակազմ բջիջներում ձևավորվող տեղեկատվությունը.

- 1) խիսունջում, տեսաթմբում և մեծ կիսագնդերի տեսողական գոտում
- 2) ուղեղիկում և մեծ կիսագնդերի շարժողական գոտում
- 3) մեծ կիսագնդերի կեղևի գագաթային և քունքային բլթերում
- 4) տեսաթմբում, ուղեղիկում, մեծ կիսագնդերի կեղևի քունքային բլթում

13

Ո՞ր պնդումն է սխալ թրոմբինի վերաբերյալ.

- 1) ազդում է ֆիբրինոգենի վրա
- 2) թրոմբինի թելիկոներից ձևավորվում է թրոմբը
- 3) կարևոր դեր է կատարում արյան մակարդման գործընթացում
- 4) ֆերմենտ է

14

Ինչի՞ է հանգեցնում մարդու օրգանիզմում քրտնարտադրության ուժեղացումը և մաշկի արյան անոթների լայնացումը.

- 1) օրգանիզմի պաշտպանմանը գերտաքացումից
- 2) արյան ճնշման բարձրացմանը
- 3) արյան հոսքի արագացմանը
- 4) մարմնի ջերմաստիճանի բարձրացմանը

15

Ինունիտետի տեսակներին վերաբերող ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) պատվաստումից հետո օրգանիզմում առաջացած հակամարմինները պայմանավորում են արհեստական պասիվ ինունիտետը
- 2) ժառանգաբար փոխանցվում է բնական բնածին ինունիտետը
- 3) կյանքի ընթացքում օրգանիզմում ձևավորված բնական ձեռքբերովի ինունիտետը փոխանցվում է սերնդեսերունդ
- 4) բուժիչ շիճուկի կազմում ստացված հակամարմինները պայմանավորում են արհեստական ակտիվ ինունիտետը

16

Ո՞ր հորմոններն են բարձրացնում զյուկողի քանակն արյան մեջ.

- 1) իմսուլինը և ադրենալինը
- 2) իմսուլինը և զյուկագոնը
- 3) թիրօքսինը և ինսուլինը
- 4) զյուկագոնը և ադրենալինը

17

Ո՞ր վիտամինի անբավարարության դեպքում է խիստ տուժում մարդու նյարդային համակարգը.

- 1) B₁
- 2) C
- 3) A
- 4) D

18

Մարդու ո՞ր բջիջներն են ներզատում միզագոյացումը կարգավորող հորմոնը.

- 1) վահանաձև գեղձի
- 2) մակերիկամների միջուկային շերտի
- 3) ենթաստամոքսային գեղձի
- 4) մակուղեղի

19 Ի-ՌՆԹ-ի մոլեկուլում ո՞ր եռյակին է համապատասխանում փ-ՌՆԹ-ի ՈՒԱՅ գաղտնազրող եռյակը.

- 1) ԱՈՒԳ
- 2) Թ-ԱՅ
- 3) ՈՒԱԳ
- 4) ԱԹ-Գ

20 Ի՞նչ է պարունակում կորիզակը.

- 1) ածխաջրեր և ԴՆԹ
- 2) ԴՆԹ և սպիտակուցներ
- 3) ՈՒԱՅ և սպիտակուցներ
- 4) ճարպեր և ՈՒԹ

21 Ի՞նչ տեղի չի ունենում բջջում ինտերֆազի G₁ փուլում.

- 1) օրգանիդների թվաքանակի ավելացում
- 2) ՈՒԹ-ի և սպիտակուցների կենսասինթեզ
- 3) բջջի չափերի աճ
- 4) ԴՆԹ-ի կրկնապատկում

22 Ի՞նչ է տեղի ունենում, երբ սկզբնական սեռական բջիջները անցնում են սերմնարանի աճման գոտի.

- 1) չեն կիսվում, տեղի է ունենում ԴՆԹ-ի կրկնապատկում, և բջիջը վերածվում է առաջին կարգի սպերմատոցիտի
- 2) տեղի է ունենում ԴՆԹ-ի կրկնապատկում և բջիջների կիսում միտոզով
- 3) տեղի է ունենում ԴՆԹ-ի կրկնապատկում և բջիջների կիսում մեյոզով
- 4) կիսվում են և վերածվում առաջին կարգի օվոցիտների

23 Ինչպես կարելի է անվանել Մենդելի երրորդ օրենքը.

- 1) գեների անկախ բաշխման օրենք
- 2) ժառանգման միջանկյալ բնույթի օրենք
- 3) հիբրիդների երրորդ սերնդի միակերպության օրենք
- 4) գամետների մաքրության վարկած

24 Ինչպես են բազմանում սպորավոր նախակենդանիները.

- 1) սպորների միջոցով
- 2) զոռապորների միջոցով
- 3) բազմակի կիսման միջոցով
- 4) բողբոջմամբ

25

Ի՞նչ արդյունք է ստացվում երկու հետերոզիգոտների մոնոհիբրիդ խաչասերման արդյունքում.

- 1) առաջանում են երկու գենոտիպային խմբեր՝ ոչ լրիվ դոմինանտուրյան դեպքում
- 2) առաջանում են երեք գենոտիպային խմբեր՝ անկախ դոմինանտուրյան բնույթից
- 3) առաջանում են չորս գենոտիպային խմբեր՝ ոչ լրիվ դոմինանտուրյան դեպքում
- 4) առաջանում են երկու գենոտիպային խմբեր՝ լրիվ դոմինանտուրյան դեպքում

26

Ծրայակցման բացակայության դեպքում ինչպիսի^o հարաբերությամբ AaBb, aaBb, Aabb, aabb գենոտիպով առանձնյակներ կստացվեն, եթե խաչասերվեն AaBb և AaBb գենոտիպով առանձնյակներ.

- 1) 1:2:1
- 2) 1:1:1:1
- 3) 4:2:2:1
- 4) 3:1

27

Ո՞րք համակցական փոփոխականության պատճառ չէ.

- 1) բեղմնավորման ժամանակ գամետների պատահական զուգակցումը
- 2) մեյօգի առաջին բաժանման անաֆազում հոմոլոգ քրոմոսոմների պատահական տարամիտումը
- 3) դրամակացիայի ժամանակ կարճ նուկեոսիդային հատվածների երկարացումը
- 4) մեյօգի առաջին բաժանման պրոֆազում դիսկոնդ քրոմոսոմների հնարավոր տրամախաչումը

28

Սաղմնային զարգացման ընթացքում ո՞ր օրգաններն են առաջանում մեզոդերմից.

- 1) սեռական գեղձերը և արյունատար համակարգը
- 2) արյունը, զիսուլեղը, լսողության օրգանները
- 3) բղլոր զգայարանները, նյարդերը, թոքերը, քրագեղձերը
- 4) մաշկը, աղիները, լյարդը, լեղապարկը

29

Ե՞րբ է սովորաբար առաջանում պոլիպոլիդ քիզը.

- 1) քրոմոսմի մի մասի՝ նրան ոչ հոմոլոգ քրոմոսմի վրա տեղափոխման արդյունքում
- 2) քրոմոսմի որևէ հատվածի 180° անկյան տակ պտույտի արդյունքում
- 3) քզի բաժանման ժամանակ քրոմոսոմների տարամիտման խանգարման արդյունքում
- 4) գենային նուտացիաների արդյունքում

30

Ո՞րք կենդանի նյութի միջավայրագոյացնող ֆունկցիայի դրսևորում չէ.

- 1) ազդեցությունը լանջաֆունների ստեղծման վրա
- 2) որոշակի քիմիական տարրերի և դրանց միացությունների գտումը և ընտրողական կուտակումը
- 3) միջավայրի ֆիզիկաքիմիական ցուցանիշների փոփոխությունը
- 4) ազդեցությունը կիմայի փոփոխության վրա

31

Ի՞նչ է ռեակցիայի նորման.

- 1) տարվա ընթացքում ջերմաստիճանի փոփոխության սահմանները
- 2) հատկանիշի մուտացիոն փոփոխականության սահմանները
- 3) հատկանիշի մոդիֆիկացիոն փոփոխականության սահմանները
- 4) տվյալ գենի որոշակի հատվածի փոփոխության չափը

32

Ո՞ր տեսակներն են կոչվում կրկնորդ.

- 1) որոնք քրոմոսոմների թվով և ձևով համապատասխանում են միմյանց, բայց տարբերվում են ձևաբանորեն
- 2) որոնք իրար հետ ազատ խաչասերվում են և տալիս բեղուն սերունդ
- 3) որոնք համապատասխանում են բոլոր չափանիշներով, բայց բնակվում են տարբեր աշխարհամասերում
- 4) որոնք ձևաբանորեն նման են, բայց իրար հետ չեն խաչասերվում

33

Հարմարվածության ինչպիսի՞ ձև է զատկաբեզի գունավորումը.

- 1) հովանավորող գունավորում
- 2) նախազգուշացնող գունավորում
- 3) միջավայրի առարկաներին նմանվելու
- 4) միմիկրիա

34

Ի՞նչն է համարվում էվոլյուցիայի ուղղորդող և շարժիչ ուժ.

- 1) հատկանիշների տարամիտումը
- 2) միջավայրի պայմանների բազմազանությունը
- 3) միջավայրի հանդեպ օրգանիզմների հարմարվածությունը
- 4) բնական ընտրությունը

35

Դեղին, հարք և կանաչ, կնճռոտ սերմերով ոլոռների խաչասերումից ստացվեց դեղին հարք և դեղին կնճռոտ սերմերով ոլոռ՝ 1:1 հարաբերությամբ: Ինչպիսի՞ գենոտիպեր ունեն ծնողական առանձնյակները.

- 1) AaBb x aabb
- 2) AABb x AABb
- 3) AABB x aabb
- 4) AABb x aabb

36

Ընտանիքում, որտեղ հայրը դալտոնիկ էր, իսկ մայրն առողջ էր, ծնվեց աղջիկ, որը տառապում էր դալտոնիզմով: Դալտոնիզմը ժառանգվում է որպես X քրոմոսոմին շղթայակցված ռեցեսիվ հատկանիշ: Գտնել աղջկա ընտանիքում դալտոնիկ երեխա ծնվելու հավանականությունը, եթե աղջկա ամուսինը չունի նշանակած հիվանդությունը.

- 1) 1\2
- 2) 1\4
- 3) 1\8
- 4) 0

37

Սննան շղթան կազմված է հետևյալ օդակներից՝ ֆիտոպլանկտոն-զոոպլանկտոն-մանր ձուկ-խոշոր ձուկ-փոկ: Կենդանու զանգված է անցնում կերած սննդի զանգվածի 12,5 %-ը, և ընդունենք, որ յուրաքանչյուր սննան մակարդակ օգտագործում է միայն նախորդ սննան մակարդակի ներկայացուցիչներին: Ամբողջ շղթայում քանի^o կգ է կազմում զանգվածի ընդհանուր կորուստը փոկի զանգվածը 4 կգ-ով ավելանալու համար.

- 1) 18720
- 2) 16380
- 3) 19998
- 4) 2044

38

Ըստ որոշ տվյալների՝ մարդկանց 40-50 %-ն ունի առաջին խմբի արյուն, 30-40%-ը՝ երկրորդ, 10-20%-ը՝ երրորդ, իսկ 5%-ը՝ չորրորդ խմբի: 5 միլիարդ մարդկանցից քանի^o սն են կրում A ազյուտինոգենը.

- 1) $2,5 \cdot 10^9 - 3,5 \cdot 10^9$
- 2) $1,75 \cdot 10^9 - 2,25 \cdot 10^9$
- 3) $0,75 \cdot 10^9 - 1,55 \cdot 10^9$
- 4) $2,75 \cdot 10^9 - 3,75 \cdot 10^9$

39

Սպիտակուցի մոլեկուլային զանգվածը 23400 գ.ա.մ. (զանգվածի ատոմական միավոր) է: Ամինաթթուների միջին մոլեկուլային զանգվածը 120 գ.ա.մ. է: Ինչքա՞ն ժամանակում (վրկ) բջջում կսինթեզվի տվյալ սպիտակուցը, եթե մեկ ամինաթթվի միացումը կատարվում է 0,2 վրկ-ում.

- 1) 39
- 2) 39,2
- 3) 38,6
- 4) 38,8

40

Օրգանիզմում գյուկոզի ճեղքման պրոցեսում առաջացավ 72 մոլ CO₂ և 480 մոլ ԱԵՖ: 1 մոլ գյուկոզից մինչև կաթնաթթու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կՋոուլ, իսկ ԱԿՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է 30 կՋոուլ/մոլ էներգիա: Հաշվել ամբողջ պրոցեսի էներգիայի կորուստը.

- 1) 36000
- 2) 18960
- 3) 21600
- 4) 18240

41

Ի՞նչ հաջորդականությամբ է մքնողրտային թթվածինն անցնում մարդու քիչներ՝ սկսած ներշնչման պահից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. թթվածնի անջատում հեմոգլոբինից
2. թթվածնի դիֆուզում ներքին օրգանի քջի քջաթաղանթով
3. թթվածնի դիֆուզում մազանոթների պատով
4. օքսիհեմոգլոբինի փոխադրում արյան կազմում մեծ շրջանի անոթներով
5. օքսիհեմոգլոբինի առաջացում
6. թթվածնի դիֆուզում թոքարշտերի պատով
7. օդի բափանցում թոքարշտեր

42

Ի՞նչ հաջորդականությամբ է տեղի ունենում ռեցեսիվ մուտացիայի առաջացումը և դրսերումը.

1. ռեցեսիվ մուտացիայի առաջացում
2. բնական ընտրության կողմից մուտացիա կրող առանձնյակների ուղղակի վերահսկողություն
3. մուտացիայի անցում հոմոզիգոտ վիճակի
4. մուտացիայի դրսերում ֆենոտիպորեն
5. ալելային ռեցեսիվ գեներ կրող առանձնյակների խաչասերման հնարավորության առաջացում

43

Նշել վիրուսների վերաբերյալ բոլոր սխալ պնդումները.

1. ծխախոտի խճանկարային հիվանդություն հարուցող վիրուսը նման է սնամեց գլանի, որի պատը կազմված է սպիտակուցի մոլեկուլներից, իսկ ներսում տեղափորկած է ԴՆԹ-ի մեկ մոլեկուլ
2. Վիրուսները տարածված են ամենուրեք, սակայն կենսագործում են և բազմանում միայն կենդանի քջիջներում
3. աղիքային ցուպիկի T4 բակտերիաֆազի մարմինը կազմված է Ո-ՆԹ-ի մեկ մոլեկուլ պարունակող գլխիկից, պոչիկից և մի քանի պոչային ելուններից
4. Վիրուսների մեծ մասի վիրուսային մասնիկը կամ վիրիոնը կազմված է ԴՆԹ-ից կամ Ո-ՆԹ-ից, որը պատված է սպիտակուցային շերտով
5. Վիրուսներում առկա է սպիտակուցների սինթեզման յուրատեսակ համակարգ
6. այն երևոյթը, երբ քջում մեկ վիրուսի առկայությունը հաճախ պաշտպանում է քիչը այլ վիրուսի ներթափանցումից, կոչվում է ինտերֆերենցիա

44

Ո՞ր գործընթացը (նշված է ձախ սյունակում) ո՞ր օրգանիզում (նշված է աջ սյունակում) է իրականանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Գործընթաց

Օրգանիզ

- | | |
|-----------------------------------------------------------|------------------|
| A. նիստերի թաղանթների վրա պրոտոնային պոտենցիալի առաջացում | 1. կորիզ |
| B. ածխաբթու գազի և ջրածնի ատոմների առաջացում | 2. միտոքոնդրիում |
| C. ֆոտոնի էներգիայի կլանում | 3. Գոլցի ապարատ |
| D. պլազմաէմի նորոգում և աճ | 4. քլորոպլաստ |
| E. ջրի մոլեկուլից էլեկտրոնի անշատում | |
| F. ոիրոսումների մեծ և փոքր մասերի ձևավորում | |
| G. քջի բաժանման ժամանակ թաղանթի քայլայում | |

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ճիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. զիգոտի տրոհման ժամանակ առաջանում են չորս բջիջներ, քանի որ բաժանումը տեղի է ունենում մեյզով
2. նշտարիկի զիգոտի առաջին բաժանման արդյունքում առաջանում են իրար հավասար երկու բջիջներ, որոնք կոչվում են բլաստոմերներ
3. նշտարիկի զիգոտի երկու բաժանումների արդյունքում առաջանում են մեկ մեծ և երեք փոքր բլաստոմերմեր
4. նշտարիկի զիգոտի տրոհման արդյունքում բջիջների քանակի մեծացմանը զուգընթաց բաժանումները դառնում են սինիսրոն, և առաջանում է ամբողջությամբ բջիջներով լցված գնդաձև բշտիկ
5. նշտարիկի զիգոտի տրոհման արդյունքում երկրորդ բաժանման ակոսն անցնում է միջօրեականի հարթությամբ և ուղղահայաց է առաջինին
6. նշտարիկի զիգոտի տրոհման ժամանակ առաջին ակոսն անցնում է միջօրեականի հարթությամբ՝ անիմալ բևեռից մինչև վեգետատիվ բևեռ

Բ մակարդակ

46

Ինչպիսի՞ն է միզագոյացման փուլերի հաջորդականությունը մարդու օրգանիզմում:
Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. առաջնային մեզի առաջացում
2. երկրորդային մեզի ձևավորում
3. զարկերակային արյան պլազմայի ֆիլտրում պատիճի խոռոչի մեջ
4. մեզի անցում պատիճից ոլորուն խողովակի մեջ
5. որոշ նյութերի հետադարձ ներծծում
6. զարկերակային արյան բաշխում երիկամային մարմնիկների կծիկների մազանոթներով

47

Ի՞նչ հաջորդականությամբ են անցնում նյարդային ազդակները ռեֆլեքսային աղեղով
մարդու օրգանիզմում: **Նշել ճիշտ հաջորդականությունը.**

1. մատի հպում տաք առարկայի
2. մկանների կծկում
3. նյարդային ազդակի հաղորդում ներդիր նեյրոնին
4. նյարդային ազդակի հաղորդում առջևի արմատիկի կազմի մեջ մտնող նյարդաքելով
5. ազդակի հաղորդում շարժողական նեյրոնին
6. գրգիռի վերափոխում նյարդային ազդակի
7. նյարդային ազդակի հաղորդում զգայական նեյրոնի աքտնով

48

Նշել մարդու օրգանիզմում մարսողական համակարգում տեղի ունեցող նյութերի նշված վերափոխումների և դրանց հաջորդող գործընթացների ճիշտ հաջորդականությունը.

1. սպիտակուցների ճեղքում մինչև ամինաթթուներ
2. օսլայի մի մասի քայքայում մինչև մալթոզ թույլ հիմնային միջավայրում
3. քաղանթանյութի ճեղքում
4. թթվային ռեակցիա ունեցող սննդախյուսի հիմնայնացում
5. սպիտակուցների ճեղքում մինչև ավելի պարզ միացություններ՝ պեպտիդներ
6. ներծծում

49

Ի՞նչ հաջորդականությամբ է արյունն անցնում մարդու արյունատար համակարգի բաժիններ՝ սկսած սրտի աջ փորոքից արտամղման պահից: **Նշել ճիշտ հաջորդականությունը.**

1. աջ փորոք
2. թոքարշտերը պատող մազանոթներ
3. ձախ նախասիրտ
4. սիներակ
5. թոքային ցողուն
6. թոքային զարկերակ
7. թոքային երակ

50

Ո՞ր հատկանիշը (նշված է ձախ սյունակում) գեների միջև փոխներգործության ո՞ր բնույթին է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Հատկանիշ

Գեների փոխներգործության բնույթը

- | | |
|----------------------------------------------------------------------|----------------------------|
| A. զիշերային գեղեցկուիի ծաղկի գույնը | 1. լրիվ դոմինանտություն |
| B. մարդու արյան խումբը | 2. գերդոմինանտություն |
| C. բրախիդակտիլիա | 3. ոչ լրիվ դոմինանտություն |
| D. ոլոռի սերմերի գույնը | 4. կոդոմինանտություն |
| E. լոլիկի որոշ սորտերի բարձր
բերքատվությունը հետերոզիգոտ վիճակում | |
| F. ոլոռի սերմերի ձևը | |

51

Ածխաջրերի մոլեկուլների ո՞ր առանձնահատկությունը (նշված է ձախ սյունակում) ո՞ր ածխաջրին է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Առանձնահատկություն

Ածխաջուր

- | | |
|---------------------------------------------------------------|-------------|
| A. կատարում է պաշարային դեր բույսերի բջջներում | 1. հեպարին |
| B. մտնում է սնկերի բջջապատի կազմության մեջ | 2. օսլա |
| C. արգելակում է արյան մակարդումը | 3. խիտին |
| D. մասնակցում է լիպիդների փոխանակման
կարգավորմանը | 4. գլիկոզեն |
| E. հանդիպում է հողվածոտանիների արտաքին
ծածկույթում | |
| F. կատարում է պաշարային դեր սնկերի և կենդանիների
բջջներում | |

52

Ո՞ր գործընթացը (նշված է ձախ սյունակում) մարդու վեգետատիվ նյարդային համակարգի ո՞ր բաժնին (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Գործընթաց

Բաժին

- | | |
|----------------------------------------------------------------|-----------------|
| A. միզապարկի պատի մկանների կծկում | 1. սիմպաթիկ |
| B. լեղու արտադրության ակտիվացում | 2. պարասիմպաթիկ |
| C. երիկամային խողովակներում ջրի հետադարձ
ներծծման բուլացում | |
| D. բրի լայնացում | |
| E. թքարտադրության բուլացում | |
| F. սրտի կծկման ուժի մեծացում | |

53

Կառուցվածքի ո՞ր առանձնահատկությունը (նշված է ձախ սյունակում) մարդու ո՞ր զգայարանին (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Կառուցվածքի առանձնահատկություն

Զգայարան

- A. ազդակներ է ուղարկում մեծ կիսագնդերի կեղևի քունքային բիլք
- B. պարունակում է համան ընկալիչներ
- C. ազդակներ է ուղարկում մեծ կիսագնդերի կեղևի ճակատային բիլք
- D. ընկալիչներն ունեն թարթիչներ
- E. պարունակում է կրային բյուրեղներ
- F. ազդակներ է ուղարկում մեծ կիսագնդերի կեղևի գագաթային բիլք

1. հոտառության
2. հավասարակշռության
3. շոշափելիքի

54

Նշել մարդու օրգանիզմի վերաբերյալ բոլոր ճիշտ պնդումները.

1. միջանկյալ ուղեղի ենթատեսաթմբում են տեղակայված վեգետատիվ նյարդային համակարգի բարձրագույն կենտրոնները
2. կամուրջը կապ է հաստատում միջին և միջանկյալ ուղեղների միջև
3. ողնուղեղի պարանոցային և կրծքային հատվածներում տեղակայված են քրտնարտադրության, ստոծանու շարժումների կարգավորման կենտրոնները
4. սիմպաթիկ նյարդային համակարգի կենտրոնները գտնվում են երկարավուն, միջին ուղեղներում և ողնուղեղի կրծքային հատվածում
5. մակերիկամների գործառույթը խթանող կենտրոնը տեղակայված է ողնուղեղի սրբանային հատվածում
6. լույսի նկատմամբ կողմնորոշման ռեֆլեքսի կենտրոնը տեղակայված է միջին ուղեղում

55

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. երկինտերոգիզոտ առանձնյակների խաչասերման արդյունքում, զույգ ալելների լրիվ դոմինանտուրթյան և գեների անկախ բաշխման դեպքում սերնդում դիտվում է 9:3;3:1 ճեղքավորում՝ և՛ ըստ գենոտիպի, և՛ ըստ ֆենոտիպի
2. երկինտերոգիզոտ առանձնյակների խաչասերման արդյունքում, զույգ ալելների ոչ լրիվ դոմինանտուրթյան և գեների անկախ բաշխման դեպքում սերնդում դիտվում է գենոտիպային և ֆենոտիպային խմբերի հավասար քանակ
3. չեզոք են համարվում այն մուտացիաները, որոնք փոփոխում են քրոմոսոմի սպիտակուցներ չկողդավորող հատվածները
4. Սենդելի անկախ բաշխման օրենքը վերաբերում է միայն այն դեպքերին, եթե ալելային գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարրեր զույգերում
5. եթե տարրեր ալելներին պատկանող գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարրեր զույգերում, ապա երկարությամբ առանձին պատկանող գեների մուտացիան կատարված է զորությամբ
6. Գ.Սենդելի կատարած փորձերում դեղին գույնի և ողորկ սերմեր ունեցող ոլորի հնարավոր գենոտիպերի թիվը հավասար է զորսի

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. ողոնուղեղի կրծքային հատվածներից ուղարկվող նյարդային ազդակները խթանում են հյութագատությունը մարտղական գեղձերից
2. սիմպարիկ նյարդային համակարգի նախահանգուցային թելերն ավելի երկար են, քան հետհանգուցայինները
3. հաստ աղիում չմարսված սնունդը կարող է պահվել 12-20 ժամ
4. հաստ աղու երկարությունը 2-2.5 մ է
5. հաստ աղից ուղիղ աղի անցման տեղում գտնվում է կույր աղին
6. քարակ աղու լորձաթաղանթն առաջացնում է 1 մմ երկարությամբ նուրբ ելուններ
7. հաստ աղու մանրէների ազդեցության տակ մարսվում են դեռևս չմարսված բուսական, մասամբ նաև կենդանական ծագում ունեցող ճարպերը
8. կույր աղին և իր որդաննան ելուստը կատարում են պաշտպանական գործառույթ արտադրում են մեծ քանակությամբ լորձ, որը պաշտպանում է լորձաթաղանթը թթուներից

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. ածխաջրերի թթվածնային ճեղքման պրոցեսում թթվածնի դերը կայանում է ներքին քաղանքի էլեկտրոն-փոխադրիչ համակարգով փոխադրված էլեկտրոնների միացման մեջ
2. օրգանական նյութերի ճեղքումը և քջային կառույցների քայքայումն իրականանում են կորիզի և Գոլջիի ապարատի անմիջական մասնակցությամբ
3. լիսիդները մասնակցում են մարդու մակերիկամների հորմոնների կենսասինթեզին
4. թթվածնային քաղցի պայմաններում որոշ բակտերիաների քջիցներում և կարնասունների մկաններում իրականացվող խմորման պրոցեսների նմանությունը կայանում է մեծ քանակությամբ ածխաթթու գազի և կաթնաթթվի առաջացման մեջ
5. խմորասնկերում խմորման արդյունքում առաջանում են սպիրտ, կաթնաթթու, ԱԵՖ և ածխաթթու գազ
6. օքսիդային ֆուֆորիլացման պրոցեսում թթվածինն անմիջականորեն մասնակցում է կաթնաթթվի օքսիդացման ռեակցիային

Նշել բակտերիաների վերաբերյալ բոլոր սխալ պնդումները.

1. բակտերիաների քանակը երկրագնդի վրա առավել շատ է սնկերի, բույսերի, կենդանիների համեմատությամբ
2. դիֆթերիա, տիֆ, խոլերա, հեպատիտ հիվանդությունների հարուցիչները տարբեր բակտերիաներ են
3. բակտերիաների ԴՆԹ-ն սպիտակուցների մոլեկուլների հետ համալիրներ է առաջացնում
4. բակտերիաների քջաթաղանթի արտաքին շերտը քջապատճ է՝ կազմված սպիտակուցներից և ածխաջրերից, հանդիպում են նաև լիսիդներ
5. անզինան, սիֆիլիսը, բռքախտը, սիրիուսը բակտերիալ հիվանդություններ են
6. լիզոցիմը բերում է բակտերիաների ոչնչացման՝ քայքայելով կապերը քջապատճ սպիտակուցների մոլեկուլներում

59

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. ատավիզմները որոշ առանձնյակների՝ նախնիների հատկանիշներին վերադառնալու դեպքերն են
2. ատավիզմները մարդու անհատական զարգացման՝ ֆիլոգենեզի խանգարումների արդյունք են
3. միկրոէվոլյուցիայի արդյունքում առաջանում են նոր տեսակներ, ցեղեր, ընտանիքներ
4. ռուղիմենտները դրսերվում են տեսակի բոլոր առանձնյակների մոտ
5. ռուղիմենտների և ատավիզմների առկայությունն օրգանական աշխարհի ծագման միասնության ապացույցներից են
6. մարդու ռուղիմենտներից են երրորդ կոպը, բազմամատությունը, դեմքի խիտ մազածածկույթը

(60-61) Բակտերիայի զանգվածը $3,34 \cdot 10^{12}$ գ է: Սպիտակուցները կազմում են քչի զանգվածի 25%-ը:

60

Քանի՞ միլիոն սպիտակուցի մոլեկուլներ կան բակտերիայում, եթե դրանց միջին մոլեկուլային զանգվածը 20000 դալտոն է: Հաշվի առնել, որ 1 դալտոնը $1,67 \cdot 10^{-24}$ գ է:

61

Քանի՞ հազար դալտոն է բակտերիայի սպիտակուցը կողավորող գենի զանգվածը: Ընդունել, որ մեկ նուկլեոտիդի միջին մոլեկուլային զանգվածը 300 դալտոն է, իսկ մեկ ամինաթթվային մնացորդի միջին մոլեկուլային զանգվածը՝ 100 դալտոն:

62

ԴՆԹ-ի մոլեկուլի հատվածը կազմված է 7920 նուկլեոտիդներից, իսկ Ա+Թ / Գ+Ց քանակական հարաբերությունը այդ հատվածում հավասար է 1,2-ի: Հաշվել ջրածնային կապերի թիվը ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածում:

63

Խաչասերել են AaBBccDdEeFf x AaBbCcDDEeFF գենոտիպերով առանձնյակներին: Ալելային գեների առաջին երեք զույգերում առկա է լրիվ դոմինանտություն, իսկ վերջին երեքում՝ ոչ լրիվ: Տվյալ հատկանիշները պայմանավորող գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարբեր զույգերում: Գտնել սերնդում հնարավոր ֆենոտիպերի թիվը:

64

Օրգանիզմում գյուկոզի մեղքան անբրվածին փուլի ընթացքում անջատված շերմային էներգիայի 18%-ը՝ 856,8 կՋ-ը, հեռացվել է մաշկի մակերևույթից շերմահաղորդման միջոցով: Օրգանիզմում գյուկոզի մեղքան արդյունքում 14 մոլ կարնաթրոլ չի ենթարկվել օքսիդացման: Ընդունել, որ 1 մոլ գյուկոզից մինչև կարնաթրոլ մեղքան ընդհանուր էներգիան կազմում է 200 կՋ և ԱԵՖ-ի մինչև ԱԿՖ մեղքան արդյունքում անջատվում է 30 կՋ էներգիա: Որոշել ամբողջ պրոցեսի օգտակար գործողության գործակիցը (%-ով): Պատասխանում ստորագետից հետո պահպանել երեք թիվ և պատասխանը բազմապատկել 1000-ով:

65

Օրվա ընթացքում մաշկի մակերևույթից ջերմահաղորդման ուղիղվ հեռացվել 3675 կՋ ջերմային էներգիա: Հայտնի է, որ մաշկի մակերևույթից գոլորշիացման միջոցով հեռացվում է ավելցուկային ջերմային էներգիայի 20%-ը, ջերմահաղորդման միջոցով՝ 15%-ը: Հաշվի առնել, որ 1 գ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է 2,45 կՋ էներգիա: Քանի^o միլիօրամ քրտինք է հեռացվել մեկ քրտնագեղձով:

66

Ծանր ֆիզիկական աշխատանք կատարելիս մարդու երիկամը ստացել է 341,25 լ արյուն: Քանի^o րոպե է տևել ծանր ֆիզիկական աշխատանքը, եթե սրտի կծկումների հաճախականությունը և մեկ կծկման ժամանակ փորոքից արտամղված արյան ծավալն աճել են 1,25 անգամ: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մարդու սիրտը մեկ րոպեում կծկվում է 75 անգամ և մեկ կծկման ժամանակ փորոքն արտամղում է 65 մլ արյուն և երիկամները ստանում են արյան շրջանառության մեծ շրջան մղված արյան ծավալի 20%-ը:

67

1 մոլ գազը գրաղեցնում է 22,4 լիտր ծավալ: 80 м^2 տերևային մակերևույթ ունեցող ծառը հունիս ամսվա ընթացքում 15-ժամյա լուսային օրվա պայմաններում քանի^o լիտր CO_2 է կլամել:

68

Դեղնաճիկների փոմփոլիկի առկայությունը դոմինանտում է փոմփոլիկի բացակայության նկատմամբ և հանդես է գալիս որպես դոմինանտ առոտումային հատկանիշ, իսկ վետուրների կանաչ գույնը դոմինանտում է շագանակագույնի նկատմամբ և ժառանգվում է որպես X քրոնոսոմին շղթայակցված հատկանիշ: Կանաչ փոմփոլիկավոր էզ և կանաչ անփոմփոլիկ արու դեղնաճիկների խաչասերման արդյունքում ստացվեցին կանաչ փոմփոլիկավոր, կանաչ անփոմփոլիկ, շագանակագույն փոմփոլիկավոր և շագանակագույն անփոմփոլիկ ճտեր: Որոշել կանաչ փոմփոլիկավոր արու ճտերի զարգանալու հավանականությունը սերնդում՝ արտահայտված տոկոսներով:

69

Օրվա ընթացքում մարդն արթուն է եղել 16 ժամ, ծանր ֆիզիկական աշխատանք է կատարել 3 ժամ: Ծանր ֆիզիկական աշխատանքի ընթացքում շնչառական շարժումներն արագացել են 2 անգամ, շնչառական օդի ծավալը մեծացել է 1,25 անգամ և օրգանիզմում յուրացվող թթվածնի ծավալն ավելացել է 25 %-ով: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արթուն ժամանակ կատարում է 16 շնչառական շարժում: Մեկ օրվա ընթացքում քանի՞ լիսր է կազմում հարաբերական հանգստի վիճակում և աշխատանքի ընթացքում օրգանիզմում յուրացված թթվածնի ծավալների տարբերությունը:

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից մեկը.

1. սրվակներն ապահովում են մարդու գունավոր տեսողությունը
2. ցանցաթաղանթից հեռացող տեսողական նյարդով լուսարնկալիչներում առաջացած նյարդային ազդակներն հաղորդվում են կենտրոնական նյարդային համակարգ
3. ակնաբյուրեղի և եղջերաթաղանթի միջև ընկած տարածությունը լցված է ապակենման մարմնով
4. ցանցաթաղանթում կան մոտ 137 մլն լուսարնկալիչներ
5. մարդու աչքում սպիտակուցաթաղանթի և անոթաթաղանթի միջև գտնվում է սև գունանյութի շերտ, որը կարգավորում է ցանցաթաղանթին հասնող լույսի քանակը՝ կլանում է ավելորդ ճառագայթները
6. թարթիչավոր մարմնի մկանները փոխում են ակնաբյուրեղի կորությունը